

գրկուելիք աշխարհին: Խառնակ՝ խաւերէն ու ելեւէջներէն: Կան բաներ, որոնք տաք ու խենթ արիւնով միայն կատարելին են: Ատոնցմէ առաջինն է ազգին սիրուն լեռ բարձրանալը: Այդ է պատճառը, որ այդ յուշերը թուղթի վրայ այնքան դժուար կը թուին մեզի: Եթէ գլուխը խնայւած ըլլար Մաթիկին, չեմ կարծեր, որ շատ տարբեր պիտի տար իր գործունէութեան ոսկեղաշուր (ինչո՞ւ չէ) անոնցմէ, որոնք տասը տարիէ ի վեր կ'ընեն ատիկա: Յեղափոխութեան այդ մայրագաւառին մէջ, ըսի թէ անիկա ճանչցաւ վերջապէս մաս մը հարազատ հայ ժողովուրդ: Իր հաճո՞յքը՝ այդ պարզ, բացսիրտ, կայտառ գեղացիներով չքացնելու Վասպուրականի խաժամուժը, որոնց գործնապաշտ ու թանձր շահախնդրութիւնը կը բաղդատէր հաւատաւոր սա բազմութեան, իսկապէս «հրեղինուած» ազատութեան ընտանի իրենց հոգին ջահի պէս հանդերձած անկախութեան երազին: Լեռնականները խանդավառած էին զինքը, հաւաքական կեանքի պատկերներով: Չէր տեսած, վասնզի չըսաւ, անոնց հերոսական արարքները, որոնցմէ ամէնէն սրտառուչը՝ գեղերու հրդեհումն էր սեփական ձեռքերով: Բայց ըրաւ մեծ կենդանութեամբ այդ անհանդարտ հոգիներուն լիակատար յարդարանքը յեղափոխական կռիւի համար: Հպարտ էր անիկա, տակաւին, այծարած Ակոյի քարայրին մէջ մեր ժողովուրդին այդ նմոյշներովը: Ազատութեան այդ զինուորները, «արծիւներու բոյնի մը պէս», այդ սարերու փէշերուն կարծես հոգին կը խորհրդանշէին ցեղին, փախած դաշտերէն, մօտ գառիթափերէն, ուր նոյն այդ միւս մասը ենթարկուած էր անճանաչելի ձեւազեղման: Այդ ցածերէն ու դաշտէն (գլխուն վտանգովը, քիւրտի պէս հագուած՝ անիկա իջաւ դաշտը ու պտտեցաւ օրերով) անիկա ճանչցաւ նաեւ այդ ժողովուրդը, այսինքն՝ զանգուածը, ասոնք ալ գեղացի մեծ մասով, բոլորովին տարբեր Կովկասի թեթեւ ու սրամիտ, զուարթ ու հեգնող տիպարէն: Հոս, այդ գեղացին ծանր էր, գլխէն զարնուած լրջութեամբ: Չէին խնդար, ատե՞ն թէ սիրտ չունենալնուն: Դարաւոր գերութիւնը